

# ԳՐԱԲԱՐԻ ՀՈՒՈՎՆԵՐԸ ՖՐԱՆԶԻՍԱԿՈՍ ՌԻՎՈՒԼԱՅԻ ԵՎ ԿՂԵՄԵՍ ՉԱԼԱՆՆՈՒԻ ԸՄԲՈՆՄԱՍԲ

## Ա. Յ. ԱՐԱՋՅԱՆ

Տասնյոթերորդ դարակազրում հայոց լեզվի ուսումնաչիրության մեջ սկսվում է մի նոր փուլ, որ ընդունված է կոչել լատինատիպ քերականությունների շրջան<sup>1</sup>:

Այս դպրոցի ներկայացուցիչները ավելի ևս զարգացնում են հունատիպ քերականության ձեռքբերումները հայոց լեզվի հետազոտության ասպարեզում: Ինչպես հունաբան դպրոցի ներկայացուցիչները հայերենի քերականության իրողությունները հետազոտում էին հունարենի օրինաչափությունների կաղապարումով, լատինաբաններն էլ «հայերենի քերականական կառուցվածքի, այդ թվում և հոլովման սիստեմի քննության մեջ առաջնորդվում են լատինական քերականության տրադիցիոն գաղափարներով ու տերմիններով, բայց հենց այդ բանը, լատինների քերականության զգալի մշակվածության պայմաններում, նրանց հնարավորություն է տալիս նշանակալից արդյունքների հասնել»<sup>2</sup>:

Լատինաբան դպրոցի հետևորդները հայերենի քերականության, այդ թվում՝ հոլովների քննությունը կատարում են համապարփակ, համակողմանի և հաճախ նյութի այնպիսի խոր իմացությամբ, որ պարարտ հող են նախապատրաստում հետագա ամեն կարգի ուսումնասիրությունների համար: Ջահուկյանի կարծիքով՝ «հաջորդ քայլը լինում է այն, որ հրաժարվում են արհեստական նորամտծություններից ու հարմարեցումներից (սակավ ձևերի գործածությունն արհեստականորեն ընդարձակելը), որոնց հիմքում ընկած էին կամ լատինների կատարելության մասին նախապաշարումները, կամ տրամաբանական քերականության՝ լեզուն բնական հիմունքներով կառուցելու սկզբունքները»<sup>3</sup>:

Հայերենի քերականության ուսումնասիրությունը ընդհանրապես և հոլովների իմաստակառուցվածքային հատկանիշների ճանաչումը մասնավորապես թեև դանդաղ, բայց հաստատուն քայլերով առաջ է գնում՝ թեև կոխելով զարգացման նոր շրջան:

Հայերենի նկատմամբ արտերկրի հետազոտողների հետաքրքրությունը պատահական չէր: Դա մեծ տերությունների վարած աշխարհաքաղաքականության արտահայտություններից մեկն էր: Դեկավար շրջանների ազդեցության ոլորտների մեծացումը ենթադրում է նախ և առաջ այդ ոլորտներում գտնվող ժողովուրդների մշակութային արժեքների ճանաչում: Իսկ այդ արժեքներից մեծագույնը լեզուն է: Ուրեմն պետք է սովորել ուրիշի (տեղացու կամ տեղացիների) լեզուն: Արևմուտքը այդ շրջանակների ընդլայնմամբ ոչ միայն հետապնդում էր քաղաքական-տնտեսական նպատակներ, նորանոր տարածքների, շուկաների, էժան աշխատուժի ձեռքբերում, այլև հետևողականորեն, որոշակի ծրագրով իրագործում էր կրոնական-եկեղեցական, սովյալ դեպքում՝ կաթոլիկական քարոզչություն՝ ուղղված հատկապես Արևելքի երկրների դեմ:

Այս նպատակով 1622 թվականին Հռոմում ստեղծվում է հոգևոր հատուկ մի կազմակերպություն՝ *S. Congragatio de Propaganda Fidei* (Հավատի քարոզչության սուրբ միաբանություն): Այստեղ մի քանի տարի հետո՝ 1627 թվականին, ստեղծվում է կաթոլիկ քարոզիչների հոգևոր դպրոց՝ իր բազմալեզվյան տպարանով: Վատիկանը քարոզչական նպատակների համար գումար երբեք չի խնայել: «Սրանց նպատակն էր արևելյան ժողովուրդների մեջ կաթոլիկության տարածումը: Այստեղից դուրս եկած կաթոլիկ քարոզիչների

<sup>1</sup> Տե՛ս Գ. Բ. Ջահուկյան, Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա զարգացումը, Եր., 1959, էջ 12, Ալ. Մարգարյան, Հայերենի հոլովները, Եր., 2000, էջ 42 և հջ.:

<sup>2</sup> Գ. Բ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 12:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 13:

և նրանց հետևողների լեզուն դառնում է լատիներենի վրա ձևված և լատինական արտահայտության եղանակներով համեմված ու վերափոխված այն գրաբարը, որ հայտնի է «լատինաբան հայերեն» անունով: Այս հեղինակների քերականական աշխատություններն էլ բնականաբար կառուցվում են լատինական քերականության օրինակով<sup>4</sup>:

Քերականական այս դպրոցը զուտ գործնական նպատակներ էր հետապնդում: Նա չէր ձգտում ստեղծել գիտական քերականություն կամ քերականության տեսություն, այլ լատիներենի օրինակով՝ «ուղիղ խոսելու և գրելու կանոններ»<sup>5</sup>:

«Ուղիղ խոսելու և գրելու» այդ կանոններն էլ, ինքնին հասկանալի է, հարմարեցված էին լատիներենի քերականական օրինաչափություններին, մեծ մասամբ դրանց պատճենումներն էին, դրանց կաղապարով կազմված ձևեր:

Սրանով հանդերձ XVII-XVIII դարերում ասպարեզ եկած հայ և օտար որոշ քերականներ գրաբարի լեզվական-համակարգային օրինաչափությունները քննելիս ոչ քիչ դեպքերում նաև փորձում են հաղթահարել օտար ազդեցությունները, բայց մինչև վերջ չեն կարողանում ձերբազատվել լատիներենին հետևելու պարտադրանքից: Այս շրջանում քննությունը ըստ էության կատարվում է օտար, ավելի ստույգ՝ լատիներենի ամբողջ, երբեմն նաև քողարկված կաղապարներով:

Լատինաբան դպրոցի առաջին առավել հայտնի հայագետներից է Ֆրանչիսկոս Ռիվոլան: Նա երկու աշխատություն է գրել հայերենի մասին: Առաջինը մի բառարան է՝ Հայերեն-լատիներեն բառարանը («Բառգիրք հայոց. *Dictionarium armeno-latinum*», Միլան, 1621), երկրորդը լատիներեն գրված «Հայոց լեզվի քերականությունն» է՝ բաղկացած չորս մասից կամ գրքից. «*Grammaticae armenae libei quattuor*», Milan, 1624<sup>6</sup>:

Ինչպես նկատում է Գ. Զահուկյանը, այս աշխատանքը միաբերան քննադատել են XIX դարի բոլոր հայ հետազոտողները: «Սակայն [նրա] թերություններին անհրաժեշտ է վերաբերվել ներողամտաբար, որովհետև այն օտարագոյի հեղինակների կողմից հայերենի քերականական կառուցվածքի ամբողջական նկարագրության առաջին փորձն է»<sup>7</sup>:

Հայերենի քերականության կառուցվածքային ընդհանուր մի շարք օրինաչափությունների շարքում Ֆրանչիսկոս Ռիվոլայի աշխատության մեջ ներկայացված է նաև հայերենի հոլովական համակարգի քննությունը: Հայերենի հոլովական համակարգը նա քննում է իր աշխատության չորրորդ մասում (գրքում. *Observations ad syntaxim spectantes*. Օարահյուսությանը վերաբերող դիտողություններ):

Գրաբարի հոլովման հետազոտության արդյունքը, ըստ Ֆ. Ռիվոլայի, այսպիսին է.

Ա. Հոլովների հարացույցից հանում է կոչական (հոշական) կոչված հոլովը, որ ինքնուրույն ձևավորում չունի, պարզապես ուղղական էր, որի սկզբից հավելվում էր *n'v* դերանունը (ո՛վ մարդ):

Դրանով իսկ նախորդ քերականների կողմից ընդունված վեց հոլովի համակարգը նա վերածում է հինգ հոլովի: Այդ հոլովներն են՝ *Nominativus* (անվանողական կամ անվանական), *Genetivus* (սեռական), *Dativus* (տրական), *Accusativus* (հայցական), *Ablativus* (բացառական):

Բ. Նկատի ունենալով, որ լատիներենում գործիականը չունի իր սեփական ձևակազմությունը և ձևավորվում է բացառականի հիմքի վրա, այն միացնում է վերջինին հետ՝ որպես *բացառական-գործիական*:

Գ. Գործիականի մի տարբերակ է համարում նաև ներգոյականը:

Դ. Նախորդ քերականները չէին կարող նկատած չլինել, որ անվան սեռականը թե՛ եզակի, թե՛ հոգնակի թվում նույնանում է տրականի հետ, բայց այս նույնացումը չէին մշտում: Ֆ. Ռիվոլան արձանագրեց այս իրողությունը որպես օրինաչափություն, որը հետագայում հիմք ծառայեց հայերենի հոլովական համակարգից սեռականը հանելուն:

<sup>4</sup> Գ. Բ. Զահուկյան, Գրաբարի քերականության պատմություն, Եր., 1974, էջ 8:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 9:

<sup>6</sup> Վերջինս ՀՀ գրադարաններում չկա: Այս գրքի մասին տեղեկությունները քաղել ենք Գ. Զահուկյանի «Գրաբարի քերականության պատմությունից», որը մեզ համար ծառայել է որպես սկզբնաղբյուր:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 10:

Ե. Հայցականի և ուղղականի եզակին համարում է նույնական, իսկ հոգնակիում ք հոգնակների փոփոխությունը ս-ի՝ հոլովացուցիչ, ինչպես՝ «զսիրտ», «զճանապարհ», իսկ բառասկզբի զ նախդիրը կատարում է հողի դեր:

Զ. Հոլովման տեսակները տարբերակում է ըստ եզակի սեռականի հոլովակազմիչի՝

Գ. Զահուկյանը ըստ արժանվույն գնահատում է Ֆ. Ռիվոլյայի բերած նորությունները գրաբարի հոլովական համակարգի ուսումնասիրության բնագավառում, ինչպես նաև նշում թույլ տված անճշտությունները:

Որքան էլ Ֆ. Ռիվոլյան տիրապետեր հայերենին, այն նրա համար, այսուհանդերձ, օտար, սովորովի լեզու էր, իսկ ելակետը դարձյալ մնում էր լատիներենը, հոլովական իմաստների տարբերակման, ձևերի կաղապարման սկզբունքները դարձյալ գալիս էին լատիներենից, այստեղից էլ բխում էին գրաբարի լեզվական փաստանյութի դասակարգման և բնութագրության մեջ ոչ հազվադեպ հանդիպող անճշտությունները, վրիպումները: Ըստ Գ. Զահուկյանի՝ Ֆ. Ռիվոլյան՝

«Որոշ հոլովածներ ճիշտ չի տալիս».

Որոշ հոլովների համար ներկայացնում է «մեկից ավելի ձևեր, եթե դրանք արտահայտում են լատիներենի միևնույն հոլովի իմաստային տարբեր առումներն ու կիրառական տարբեր արժեքներ»:

«Չի կարողանում տարբերել գրաբարյան ձևերը ոչ գրաբարյան ձևերից՝ տալով դրանք խառն ձևով կամ պարզապես իբրև տարբերակներ (*իսձ* և *իսձի*, *մեք* և *մեձք*, սեռ.՝ *իմուց*)».

«Խառնում է տարբեր հոլովածները. այսպես, օրինակ, ստացական դերանունների սեռականի և տրականի համար տալիս է և՛ սեռականի, և՛ տրականի ձևերը (սեռ. *իմոյ-իմում*, *քոյ-քում*, տր. *իմոյ-իմում*, *քոյ-քում*) և այլն»<sup>9</sup>:

Այս և նման այլ կարգի անճշտությունները բնավ չեն նսեմացնում օտարագրի հայագետ Ֆրանչիսկո Ռիվոլյայի ծառայությունները հայոց լեզվի կառուցվածքի գիտական ուսումնասիրության բնագավառում:

Նրա հիշյալ աշխատությունը հայոց լեզվի քերականության քննությանը նվիրված առաջին տպագիր գործն էր: Այս փաստը ինքնին պերճախոս վկայություն է Ֆ. Ռիվոլյայի՝ հայ քերականագիտական մտքի զարգացմանը մատուցած ծառայության:

Գրաբարի քերականական համակարգի, այդ թվում հոլովների իմաստային արտահայտությունների և ձևակազմությունների խնդիրները շարունակում էին մնալ հայ և օտար լեզվաբանների ուշադրության կենտրոնում: Հետաքրքրությունը հայերենի նկատմամբ ավելի է մեծանում Ֆ. Ռիվոլյայի աշխատության հրատարակումից հետո: Այդ հետաքրքրությունը նկատվում է թե՛ Հայաստանում, թե՛ նրա սահմաններից դուրս:

Քսան տարուց մի փոքր ավելի ժամանակամիջոց էր անցել Ֆ. Ռիվոլյայի նշանավոր գրքի հրատարակումից, երբ 1645 թվականին Հռոմում լույս է տեսնում Կդեմես Գալանոսի (1610-1666 թթ.) «Քերականական և տրամաբանական ներածութիւն առ յիմաստութիւնն շահելոյ» աշխատությունը:

Մինչև Կ. Գալանոսի՝ գրաբարի հոլովման ըմբռնման հարցի քննությանն անցնելը հարկ ենք համարում նշել հետևյալը:

Հայ քերականագիտության պատմության մեջ ավանդաբար գրաբարի՝ հայերեն լեզվով գրված առաջին դասագրքի հեղինակ համարվել է Կ. Գալանոսը, որի քերականությունը, ինչպես նշվեց, լույս է տեսել 1645 թվականին Հռոմում: Խնդիրն այն է, որ XVII դարի նշանավոր իմաստասեր և քերական Սիմեոն Ջուղայեցին իր «Գիրք որ կոչի քերականութիւն» աշխատությունը գրել է 1637 թվականին: Այն, սակայն, հրատարակվել է շատ ուշատ ավելի ուշ՝ 1725 թ.:

Ս. Ջուղայեցու և նրա ժամանակակիցների քերականագիտական աշխատություններում առկա մի շարք հարցադրումների, մեկնությունների, դրույթների մասնությունները, հաճախ նաև նույնությունը Ֆիմք են տվել որոշ հետազոտողների (Աշոտ Աբրահամյան,

<sup>9</sup> Տե՛ս Գ. Գ. Զահուկյան, Գրաբարի քերականության պատմություն, էջ 15, Ալ. Մաթաթյան, Հայերենի հոլովները, էջ 42-43:

<sup>1</sup> Գ. Գ. Զահուկյան, Գրաբարի քերականության պատմություն, էջ 19 և հջ.:

Վարագ Առաքելյան և այլք) ենթադրելու, որ Ս. Ջուղայեցին հետևել է Կ. Գալանոսին, Հովհ. Հոլովին, Շրյոդերին, որոնց աշխատությունները ավելի վաղ են լույս տեսել, քան 1725 թիվն է: Այլ կերպ ասած՝ Ս. Ջուղայեցուն համարել են ժամանակագրական առումով հիշյալ հեղինակներին հաջորդող և շատ սկզբունքներով նրանց հետևող հեղինակ: Այս տեսակետը վիճարկվել է հայ իմաստասիրական մտքի հմուտ հետազոտող Հր. Միրզոյանի կողմից: Ըստ Հր. Միրզոյանի՝ «Ուշ տպագրվելու պատճառով (նկատի ունի Ս. Ջուղայեցու «Գիրք որ կոչի քերականութիւն» աշխատությունը - Ա.Ա.) Ս. Ջուղայեցին չի գնահատվել ինչպես հարկն է: Իրականում ոչ թե Ջուղայեցին է տեսական ընդհանուր հարցերում մնացել իրեն «նախորդող» քերականների (Կ. Գալանոսի, Հ. Հոլովի, Շրյոդերի - Ա.Ա.) դիրքերի վրա, այլ ընդհակառակը, հաջորդելով Ջուղայեցուն՝ նրանք են մնացել Ջուղայեցու դիրքերի վրա»<sup>10</sup>:

Այս եզրակացությանը Հր. Միրզոյանը հանգում է այն հիման վրա, որ թեև Ս. Ջուղայեցու գիրքը ուշ է հրատարակվել հիշյալ հեղինակների գրքերից, սակայն ունեցել է բազմաթիվ ընդօրինակումներ և տասնամյակների ընթացքում ծառայել է իբրև դպրոցական դասագիրք: Մատենադարանում առ այսօր պահպանվել են Ս. Ջուղայեցու նշված գրքի տասից ավելի ձեռագրեր:

Ժամանակագրական առումով Ս. Ջուղայեցու գրքի առաջնայնության վերաբերյալ դրույթը Հր. Միրզոյանը հաստատում է նաև իր մեկ այլ՝ ավելի ուշ հրատարակված աշխատության մեջ: «Սիմեոն Ջուղայեցու «Քերականությունը», - գրում է նա, - լինելով արդի իմաստով հայոց լեզվի առաջին դասագիրքը, ձեռագիր վիճակում ունեցել է լայն տարածում: Նրանից մեծ չափով օգտվել են հետագայի մի շարք քերականներ (Կղեմես Գալանոս, Հովհաննես Ջուղայեցի, Պաղղասար Դպիր և ուրիշներ)»<sup>11</sup>:

Գալանոսի նշված աշխատության առաջին մասը, որ նվիրված է գրաբարի քերականության քննությանը, ունի բավականաչափ ծավալուն խորագիր՝ «Համառոտ քերթողութիւն քերականութեան, շարակարգեալ ի կարգե Թեոթիմոսաց Կղեմես վարդապետե, ներում կատարելապէս պարունակին արհեստք չորք, այսինքն՝ Ուղղագրութիւն, Բանաստեղծութիւն, Արտաբերութիւն և Օարադրութիւն, արտահանեալ ի քերականութեանցն յունաց և լատինացոց»:

Ինչպես կարելի է նկատել, Կ. Գալանոսը ևս գրաբարի տեսությունը ներկայացնում է չորս բաժիններով՝ «ուղղագրություն», «բանաստեղծություն», որ տաղաչափությունն է, «արտաբերություն», որ ժամանակակից տերմինաբանությամբ՝ հնչյունաբանությունն է, «շարադրություն», որը ժամանակակից տերմինաբանությամբ շարահյուսությունն է՝ ձևաբանության հետ մեկտեղ, որոշ իմաստով՝ միահյուսված:

Ուշագրավ է, որ հին քերականություններում տաղաչափությունը պարտադիր ներկայացված էր լինում թեևնուզ համառոտ տեղեկությունների կարգով:

Ինչպես Ֆ. Ռիվոլյան, Կ. Գալանոսը ևս շարահյուսության քննությունը կատարում է գրքի չորրորդ մասում: Օարահյուսությունը այստեղ ընդգրկում է նաև խոսքի մասերի քննությունը, բնականաբար նաև հոլովների տեսությունը:

Միանգամից պետք է ասենք, որ նա մերժում է հոլովների՝ Ֆ. Ռիվոլյանի հարացուցային կաղապարները և առաջարկում դասակարգման նոր սկզբունքներ: Կ. Գալանոսը ոչ միայն վերականգնում է կոչական հոլովը, որ մերժել էր իր նախորդը, այլև հարացույցը համալրում ևս չորս հոլովներով՝ այսպիսով ճանաչելով տասը հոլով: Այս տասը թվի մեջ մտնում են հնդեվրոպական լեզվի բոլոր ութ հոլովները՝ 1) ուղղականը, 2) կոչականը, 3) սեռականը, 4) տրականը, 5) հայցականը, 6) բացառականը, 7) գործիականը, 8) ներգոյականը, և պատմականն ու պարառականը:

Այս անվանումները գործածվում են ավանդաբար: Կ. Գալանոսի տերմինաբանությունը ուրիշ է: Նա գրում է. «Հոլովք տասն [են]: Առաջինն է ուղղական, որ Անուանական ասի: Իսկ մնացեալքն՝ հոլովականք, որք ասին՝ Սեռական, Տրական, Կրողական»<sup>12</sup>:

<sup>10</sup> Հ. Միրզոյան, Սիմեոն Ջուղայեցի, Եր., 1971, էջ 43:

<sup>11</sup> Հ. Ղ. Միրզոյան, XVII դարի հայ փիլիսոփայական մտքի քննական վերլուծություն, Եր., 1983, էջ 71:

<sup>12</sup> Կ. Գալանոս, Քերականական և տրամաբանական ներածություն առ իմաստասիրութիւնն շափելոյ. Grammaticae et logicae institutiones linguae literales Armenicae Armenis traditae ad Clemente Galano, Հոմմ, 1645, էջ 29:

Նշված տասը հիշումները տարբեր սրբագրումներով ու անվանումներով, ինչպես նկատում է Գ. Զահուկյանը, հանդիպում են նաև գրաբարի հետագա քերականություններում ընդհուպ մինչև XIX դարի սկիզբը<sup>13</sup>:

Հիմքում ունենալով հայերենի հիմաստային կառուցվածքը և արտահայտության ձևը կամ եղանակը՝ հայ իրականության մեջ Կ. Գալանոսը առաջինն էր, որ հիշումները քննեց բազմաստիճան (բազմահատկանիշ) սկզբունքով:

Առաջին աստիճանում նրա ուշադրության կենտրոնում էր հիշումների կաղապարման կամ ելակետային սկզբունքը: Դասակարգման այս աստիճանում նա ստացավ երկու կարգի հիշումներ, ինչպես ընդունված էր հունարեն, այսպես նաև լատինարեն քերականների աշխատություններում: Առաջինը ուղիղ հիշումն էր. «Առաջինն է ուղղական, որ *անուանական* ասի»: Սա բառի անվանական ձևն է, *սկզբնաձևը* կամ *եյակետային* ձևը: Երկրորդ խումբը կազմում են մնացած բոլորը ինը հիշումները. «Իսկ մնացեալքն՝ *հիշումներն*»: Դժվար չէ նկատել, որ *հիշումներն* բառը հեղինակը կիրառել է ոչ թե լեզվաբանական տերմինի նշանակությամբ՝ գոյականի քերականական ծանոթ կարգ նշանակելու համար, այլ թեքվելը, «ստուտը, գլորիլը, գլորսկիլը, փոփոխական» լինելը, փոփոխված լինելը<sup>14</sup>, այսինքն՝ արդի տերմինաբանությամբ՝ *թեքումը* ցուցադրելու համար:

Երկրորդ աստիճանի դասակարգման հիմքում դրել է ընդհանուր լեզվաբանական տեսանկյունը: Ըստ այդմ՝ ստացել է միայն հայերենին (իմա գրաբարին) հատուկ չորս հիշումներ, որոնք «ի հայունս միայն գտանին»<sup>15</sup>: Դրանք են՝ 1. բացառականը (առողականը – յԱդամայ), 2. նույնպես բացառականը, բայց զ նախորդ (պատմականը – զԱդամայ), 3. գործիականը՝ զ նախորդ (պարտականը – զԱդամայ), 4. ներգոյականը (կացողականը – յԱդամայ)<sup>16</sup>:

Կ. Գալանոսը, սակայն, չի բավարարվել երկաստիճան դասակարգմամբ: Բուն անվան նրա կազմած հիշումական հարաբերություն կան ինչպես միայն վերջավորությամբ, այդ թվում՝ զրոյական կամ բացասական վերջավորությամբ ձևավորված հիշումներ, այնպես էլ նախորդավոր հիշումներ: Միայն վերջավորությամբ ձևավորված հիշումներն են՝ *ուղղականը* - (*անուանականը*, եզ. - *բան*, հոգն. - *բանք*), *սեռականը* (եզ. - *բանի*, հոգն. - *բանից*), *գործիականը* (եզ. - *բանի*, հոգն. - *բանիք*):

Միայն վերջավորությամբ կազմվող հիշումներին նա հակադրում է համապատասխան վերջավորությամբ, այդ թվում՝ զրոյական վերջավորությամբ և նախորդ կազմությունները (նախորդավոր կամ նախորդի ձևերը, որոնք ներկայացնում են մնացած բոլորը): Ասենք նաև, որ Կ. Գալանոսը տակակվին չունեցող *գորոյական* վերջավորության քերականական ըմբռնումը: Այդ ըմբռնումը պիտի գոյանար շատ ավելի ուշ՝ արդեն մեր օրերում: Խոսքը պարզապես վերաբերում է նրան, որ հեղինակը զրոյական վերջավորությամբ ձևը դրել է բուն վերջավորությամբ կազմվող, այլ ոչ թե վերջավորությամբ և նախորդ կազմվող ձևերի հետ:

Նա հիշումակազմիչ դեր է հատկացնում երկու նախորդի՝ *ի* և *զ* նախորդներին, որոնցից յուրաքանչյուրով կազմում է երեքական հիշումներ: Այդ երկու նախորդներին կարելի է ավելացնել նաև *ո՛վ* դերանունը, որին նույնպես հատկացված է հիշումակազմիչ դեր: Նրանով կազմվում է կոչականը՝ *ո՛վ Ադամ*:

*ի* նախորդով կազմվում են տրականը, եզակին՝ *ի բան* (*ի բանում*, *ի բանի*), հոգնակին՝ *ի բանս* (*ի բանից*), առողականը, եզակին՝ *ի բանէ*, հոգնակին՝ *ի բանից*, կացողականը, եզակին՝ *ի բանի* (*ի բանում*), հոգնակին՝ *ի բանս*: *զ* նախորդով կազմվում են՝ կրողականը, եզակին՝ *զբան*, հոգնակին՝ *զբանս*, պատմականը, եզակին՝ *զբանէ*, հոգնակին՝ *զբանից*, պարտականը, եզակին՝ *զբանի*, հոգնակին՝ *զբանիք*:

Կ. Գալանոսը միայն հիշումները չէ, որ քննում է, այլև հիշումների կաղապարման, ավելի ստույգ՝ հիշումների տարբերակման սկզբունքները: Հիմքում ունենալով անվան եզակի սեռականը՝ նա տարբերակում է հինգ կարգի հիշումներ, որոնք են՝

<sup>13</sup> Գ. Բ. Զահուկյան, Գրաբարի քերականության պատմություն, էջ 31:

<sup>14</sup> Տե՛ս «Առձեռն բարարան հայկազնեան լեզուի», Անթիլիաս, 1988, էջ 504:

<sup>15</sup> Տե՛ս Կ. Գալանոս, նշվ. աշխ., էջ 29:

<sup>16</sup> Տե՛ս նույն տեղը:

Առաջին հոլովում - ա) *այ, բ)- ան, գ)-եան*.

Երկրորդ հոլովում - ա) *-ի, -ից, բ) ի, աց,*

Երրորդ հոլովում - ա) *ոյ, բ) տոյ,*

Չորրորդ հոլովում - *ու,*

Հիմնգերորդ հոլովում. «որոյ սեռական յոչ անգի կամ ի միճն երից նայն տառից, այսինքն՝ ի գատ կամ ի նու կամ ի ըէ». - *ր-ի* հանգողների մեջ տարբերում է երեք ենթատեսակ՝ *եր, օր, ուր*<sup>17</sup>:

Դիտելի է, որ բացի չորրորդ հոլովումից, որը պահում է միայն *ու* վերջավորությունը (*ժամ-ժամու*), մնացած բոլորը ունեն տարբերակներ. առաջինը՝ երեք տարբերակ՝ *-այ, -ան, -եան* (*Ադամայ, անման, բնութեան*), երկրորդը՝ երկու *-ի, ից, -ի, -աց* (*բանի, բանից, հրամանի, հրամանաց*), երրորդը՝ երկու տարբերակ՝ *-ոյ, -տոյ* (*մարմնոյ, կենդանոյ*), հինգերորդը՝ չորս տարբերակ՝ *ոչ, ե[ղ], եա [ր], (կնոջ, աստեղ, տեան)*, որոնցից վերջինն իր հերթին ունի երեք ենթատեսակներ. *աղբեր - աղբեր, հայր - հօր, օր - աուր*<sup>18</sup>:

Ըստ որում՝ յուրաքանչյուր հոլովում ներկայացնելիս Կ. Գալանոսը ճշտում է, թե ո՞ր բառերն են պատկանում սովյալ հոլովմանը, ճշում հասկապես այն վերջածանցները և բարդության երկրորդ բաղադրիչները, որոնց առկայությունը որոշում է բառի՝ ո՞ր հոլովման պատկանելը<sup>19</sup>:

Կդեմես Գալանոսի ներկայացրած համակարգի մասին ավելի առարկայական պատկերացում կազմելու համար ստորև բերում ենք տարբեր հոլովումների ենթարկվող մի քանի բառերի հոլովման հարացույցներ՝ հեղինակային տերմինաբանությամբ:

### ԱՌԱՋԻՆ ՀՈԼՈՎՈՒՄ

Ե զ ա կ ի

<i>Առաջին ենթատեսակ</i>	<i>Երկրորդ ենթատեսակ</i>	<i>Երրորդ ենթատեսակ</i>
Անվ. Ադամ	անումն	բնութին
Սեռ. Ադամայ	անման	բնութեան
Տր. յԱդամ, ցԱդամ	յանումն, անման	ի բնութին
Ադամում, Ադամայ		բնութեան
Կր. զԱդամ	զանումն	զբնութին
Կոչ. ո՛վ Ադամ	ո՛վ անումն	ո՛վ բնութին
Առ. յԱդամայ	յանմանէ	ի բնութեանէ
Գործ. Ադամաւ	անմամբ	բնութեամբ
Պատմ. զԱդամայ	զանմանէ	զբնութեանէ
Կաց. յԱդամում, յԱդամ	յանման, յանումն	ի բնութեան
Պար. ԶԱդամաւ	զանմամբ	զբնութեամբ

### Հոգմակի

<i>Երկրորդ ենթատեսակ</i>	<i>Երրորդ ենթատեսակ</i>
Անվ. անմունք	բնութինք
Սեռ. անմանց	բնութեանց
Տր. յանմունս, անմանց	ի բնութինս, բնութեանց
Կր. զանմունս	զ բնութինս
Կոչ. ո՛վ անմունք	ո՛վ բնութինք
Առ. յանմանց	ի բնութեանց
Գործ. անմամբք	բնութեամբք
Պատմ. զանմանց	բնութեանց
Կաց. յանմունս	ի բնութինս
Պար. զանմամբք	զբնութեամբք <sup>20</sup> :

<sup>17</sup> Տե՛ս Գ. Բ. Զահուկյան, Գրաբարի քերականության պատմություն, էջ 32:

<sup>18</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>19</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>20</sup> Այս հարացույցների և դրանց բնութագրումների մասին ավելի մանրամասն տե՛ս Գ. Բ. Զահուկյանի Ռիշ. աշխ., էջ 32 և հջ.:

# ԵՐԿՐՈՐԴ ՀՈՒՈՎՈՒՄ

## Եզակի

### Առաջին ենթատեսակ

Անվ. բան  
 Սեռ. բանի  
 Տր. ի բան, ի բանում, ի բանի  
 Կրող. զբան  
 Կոչ. ո՛վ բան  
 Առող. ի բանէ  
 Գործ. բանի  
 Պատմ. զբանէ  
 Կաց. ի բանի, ի բանում  
 Պար. զբանի

### Երկրորդ ենթատեսակ

հրաման  
 հրամանի  
 ի հրաման, հրամանում, հրամանի  
 զհրաման  
 ո՛վ հրաման  
 ի հրամանէ  
 ի հրամանաւ  
 զհրամանէ  
 ի հրամանի, ի հրամանում  
 զհրամանաւ

## Հոգնակի

Անվ. բանք  
 Սեռ. բանից  
 Տր. ի բանս, ի բանից  
 Կրող. զբանս  
 Կոչ. ո՛վ բանք  
 Առող. ի բանից  
 Գործ. բանիք  
 Պատմ. զբանից  
 Կաց. ի բանս  
 Պար. զբանիք

հրամանք  
 հրամանաց  
 ի հրամանս, հրամանաց  
 զհրամանս  
 ո՛վ հրամանք  
 ի հրամանաց  
 հրամանօք  
 զհրամանաց  
 ի հրամանս  
 զհրամանօք

Նախդիրների բաշխումը անձնական դերանունների հիոլովման հարացույցում կատարվում է գրեթե նույն սկզբունքով, ինչպես անվան դեպքում, միայն մեկ տարբերությամբ. դերանվան տրականը աննախդիր է՝ ի տարբերություն գոյականի նախդիրի վազմությամբ: Ահա եզակի և հոգնակի առաջին և երկրորդ դեմքերի դերանունների հիոլովական հարացույցները, որոնք ներկայացրել է Կ. Գալանտը:

### Եզակի

Անվ. ես, դու  
 Սեռ. իմ, քոյ  
 Տր. ինձ, քեզ  
 Կրող. զիս, զքեզ  
 Կոչ. ո՛վ դու  
 Առող. յինէն, ի քէն  
 Գործ. ինեւ, քեւ  
 Պատմ. զինէն, զքէն  
 Կաց. յիս, ի քեզ  
 Պար. զինեւ, զքեւ

### Հոգնակի

մեք, դուք  
 մեր, ձեր  
 մեզ, ձեզ  
 զմեզ, զձեզ  
 ո՛վ դուք  
 ի մէնջ, ի ձէնջ  
 մէօք, ձէօք  
 զմէնջ, զձէնջ  
 ի մեզ, ի ձեզ  
 զմէոք, զձէոք<sup>21</sup>:

Կ. Գալանտի՝ հայերենի հիոլովների իմաստակառուցվածքային հատկանիշների ճանաչումը, հարացուցային ձևերի կառուցումը, դասակարգումը, ընդհանրապես ըմբռնումը անշուշտ համապատասխանում էին ժամանակի լեզվաբանական-մեթոդաբանական սկզբունքներին, հայեցողական էին, մտազննական, ունեին տրամաբանական որոշակի հիմք և գերծ էին միջնադարյան սխոլաստիկական կաղապարներից, ուստի և անկասկած առաջադիմական էին:

Կ. Գալանտի դիտարկումները գրաբարի հիոլովական համակարգի վերաբերյալ հիմնականում հանգում են հետևյալին:

<sup>21</sup> Տե՛ս Գ. Բ. Զառուկյան, Գրաբարի քերականության պատմություն, էջ 39-40, Ալ. Մարգարյան, Հայերենի հիոլովները, էջ 40 և հջ.:

1. Նա գրաբարի Ռոլովները տարբերակում է ո՛չ միայն ձևային կամ ձևակազմական հատկանիշներից ելնելով, այլև իմաստային, այսպես ասած՝ Ռոլովաիմաստային: Ձևը և իմաստը քննում է, իր տեսակետով, միասնության մեջ, թեև, այսուհանդերձ, ինչ-որ չափով գերապատվություն է տալիս Ռոլովական իմաստին: Այստեղ նա իրոք հետևողական է և հստակ պատկերացնում է ձևերն ու դրանց դրսևորած իմաստները:

2. Այս սկզբունքով առաջնորդվելով՝ մերժում է հունարան դպրոցի հինգ Ռոլովի տեսությունը և, ինչպես Ս. Ջուղայեցին, գուցե և նրան հետևելով, առաջարկում տասը Ռոլով, որը ընդհանուր ճանաչման է արժանանում և արտացոլվում է հետագա շրջանի քերականներից շատերի և ամենից առաջ՝ հայ քերականների աշխատություններում, ընդհուպ մինչև XIX դարի սկիզբը՝ քերականական նոր ուղղությունների ստեղծումը:

3. Կրկին ներմուծում է ներգոյականի գաղափարը, ըստ որում՝ հենց *ու՛Վերջավորությամբ* (կացողական-ի բանում, նաև՝ *ի բանի*):

Որ ներգոյականի իրավունքները վերականգնվում են, սա թեև էական փաստ է, բայց ոչ ամենաէականը: Հայտնի է, որ մեր հին քերականներից ոմանք ընդունել են գրաբարում ներգոյական Ռոլովի առկայությունը, համենայն դեպս՝ ժամանակակից ըմբռնմամբ՝ ներգոյականի իմաստի արտահայտության հնարավորությունը, ինչպես՝ *ի պատուի, ի սովէ, ի սգի, ի տղմէ, ի տօթի, ի քացախի* և այլն<sup>22</sup>:

Հայերենը հնդեվրոպական դուստր լեզուներից մեկն է: Հնդեվրոպական նախամայր լեզուն ուներ այդ Ռոլովը: Ըստ Հր. Աճառյանի՝ այն արտահայտվում էր *I* վերջավորությամբ, որը կարող էր վերածվել գրոյի կամ փոխվել *ei, oi, ai, ei, ai, ou*, նայած թե ի՛նչ հիմքերի [*բների* - Հր. Աճ.] վրա էր դրված<sup>23</sup>:

Դուստր լեզուներից շատերը կորցրել են այդ վերջավորությունը, դրա հետ միասին՝ նաև Ռոլովը: Մի մասը պահել է: Հայերենը կորցրել էր: Բայց սովորության ուժով, նկատի ունենալով այդ Ռոլովի նախնական իմաստը, որոշ քերականներ փորձում էին այն արտահայտել այլ ձևերով: Նրանց թվում էր նաև Կ. Գալանոսը, որ նախորդներից բավականաչափ առաջ էր գնում նրանով, որ վերցնում էր տրականի *ու՛Վ*-ով ձևը: Հենց այս *ու՛Վ*-ը հետագայում պիտի դառնար աշխարհաբարի ներգոյական Ռոլովի թեքույթը և դարձավ:

4. Նա *ու՛* դերանվանը հատկացրել է Ռոլովակազմիչ դեր, ինչպես *ի* և *զ* նախդիրներին: Այդ դերանվամբ, որը գուցորդվում էր գոյականներին և անձնական երկրորդ դեմքի դերանվան եզակի և հոգնակի Ռոլովաձևերին, կազմում է կոչական (հոշական) Ռոլովը: Այս Ռոլովը, ինչպես նշվեց, նախկինում ևս ճանաչված է եղել գրաբարի որոշ քերականների կողմից, սակայն հունարան դպրոցի հետևորդները այն հանել էին Ռոլովական հարացույցից: Կ. Գալանոսը կրկին վերադարձնում է հարացույցի մեջ: Գոյականին կամ դերանվանը նախորդող *ու՛* դերանունն էլ ըստ էության նախապես ունեցել է կոչական ձայնարկության ճշանակություն, որպես թե ասվեր՝ այ՛ (է՛յ, հե՛յ) մարդ, այ՛ (է՛յ, հե՛յ) դու, ինչպես Ավ. Իսահակյանի խոսքում՝ է՛յ դու, ջահե՛լ, հպա՛րտ հասակ, անցար ոսկի ամպի պես...: Սակայն Կ. Գալանոսը ամենայն հավանականությամբ այն կիրառել է նախդրի արժեքով, ինչպես վարվել է *ի* և *զ* նախդիրների հետ՝ նրան ևս հատկացնելով Ռոլովակազմիչ դեր:

5. Կ. Գալանոսը Ռոլովների ձևաիմաստային բնութագրումների մեջ երբեմն հանդես է բերում անհետևողականություն. օրինակ՝ մինևույն կազմությամբ ձևերը համարում է տարբեր Ռոլովներ: Տրականի դիմաց դնում է *ի բանի* և *ի բանում*, կացողականի (ներգոյականի) դիմաց՝ նույնպես՝ *ի բանի, ի բանում* և այլն<sup>24</sup>:

Այսուհանդերձ՝ Կղեմես Գալանոսը զգալի վաստակ ունի հայերենի ոչ միայն Ռոլովական համակարգի տեսության մշակման, այլև ընդհանրապես հայագիտական մտքի զարգացման ասպարեզում:

<sup>22</sup> Տե՛ս Հր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, Բ. 3, Եր., 1957, էջ 405 և հջ.:

<sup>23</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 340:

<sup>24</sup> Տե՛ս Գ. Բ. Զահուկյան, Գրաբարի քերականության պատմություն, էջ 36 և հջ.:



**А. Г. АБАДЖЯН - Склонения в грабаре в понимании Франческо Ривола и Клемента Галаноса.** - В начале XVII века в изучении армянского языка начинается новый этап, который принято называть эпохой латиноподобных грамматик. Первым наиболее известным представителем латинской школы арменоведов является Ривола. Результаты исследования склонений в грабаре, согласно Риволе, следующие:

- 1) принятую предыдущими лингвистами шестипадежную систему Ривола заменяет пятипадежной, выведя из парадигмы звательный падеж;
- 2) творительный падеж Ривола объединяет с аблативом (отложительным);
- 3) считает одной из разновидностей творительного и местный падеж;
- 4) он первым отмечает, что родительный падеж имени в единственном и множественном числах отождествляется с дательным.

Галанос отвергает парадигматические рамки склонений Ривола и предлагает новые принципы классификации. Он признает 10 падежей, анализируя их на основании многопризнаковых принципов. Снова внедряет идею местного падежа. Местоимению - ու պի приписывает "склонениеобразующую" роль. Существен вклад Галаноса не только в дело разработки теории падежной системы, но и в развитие арменоведческой мысли в целом.